

գիջանել: Երկրի պետը, իշխանաց իշխանը Աշոտն էր, յիշեալ Սահակի որդին, «այր խոհական հանճարով», որ բաց է բաց ընդդէմացաւ ապստամբութեան, խրատեց չանսալ մտրեկան մոնոպոնի (կրօնաւորի) քարոզին եւ յետ կեանալ մնասակար ձեռնարկից:

Կուսակցական հայեացակէտների ընդհարման սուր վայրկեան էր: Աշոտի դերքը փափուկ էր: Քսան տարի առաջ նոյն վիճակի մէջ էր միւս Աշոտը, այս Աշոտի պատի եղբայրը: Նրա նման եւ հետեւութեամբ Աշոտը պատասխանատուութեան ծանր բեռն ուներին չյապաղեց, չվեհերեց արտասանել այս վճիռ եւ խոհուն խօսքերը.—

«Մանկունք էք եւ կրտսերագոյնք հասակաւ եւ զիտեմ եթէ ոչ կարէք զդէմ ունել զօրութեան բազմազլուխ վիշապին, զի հզօր է զօրութիւն նորա եւ անթիւ բազմութիւն ընդ ձեռամբ նորա եւ անչափ պատրաստութիւն զինուոց ի դանձս նորա: Եւ ամենայն թազաւորութիւնք որք հակառակ կային իշխանութեան նորա, փշրեցան որպէս զանօթ բրտի: Զի թէ չընովմայեցւոց թազաւորութիւն ոչ կարաց համբառնալ զձեռս ի վեր, այլ սարսեալ զողաց յերեսաց նորա եւ ոչ յանդէնիլ ընդդէմ տէրունեան հրամանին, զի եւ դուք չէք անտեղեակ ամենայն զօրութեան արքային յունաց, քաջութեան անձին նորա եւ բազմութեան եւ պատրաստութեան զօրաց նորա, զի ամենեւին ընդ միտ անգամ ոչ էառ ածել զմաւ առնուլ զաշխարհս հայոց ի ձեռաց նորա, Կոստանդին, որդի Լեոնի, որ մենամարտեալ ի միում աւուր ընդդէմ ահաւոր դադանացն, սպան զառիւծն իրբեւ զուլս այժեաց: Արդ որ դայս ոյժ զօրութեան ունէր, այնպէս ընթաղրեալ է յահէ չարաթոյն դադանին որ ապականէ գերկիր: Իսկ դուք յո՞վ արդեօք ապախնեալ եւ կամ որով զօրութեամբ եւ որով ուժով կարէք գրէմ ունել անյաղթելի իշխանութեան նոցա:

«Արդ՝ եթէ հաճոյ թուի անձանց ձերոց, ընկալարուք զխրատ իմ, քանզի զօրութեան ձեր եւ զպիտոյսն եւ զանդորութիւն աշխարհիս տեսանեմ ես: Զի այս լինի ելք զործոցդ, կամ դառնալ ձեզ եւ մտանել ընդ հնազանդութեամբ նոցա եւ հանդարտիլ եւ կեալ խաղաղութեամբ յերկրիս ձեր եւ կամ մերժիլ փախստեամբ հաճօրէն ընտանեօք յերկրէս ձերմէ եւ լքանել,

թողուլ զժառանգութիւն հարցն ձերոց, զքնակութիւնս ձեր, զանտառս եւ զանդաստանս, նաեւ զգերեզմանս հարց ձերոց եւ երթալ քնակիլ նօղեհոլութեամբ ընդ արքային յունաց եւ կամ թէ ոչ՝ անկանիցիք ի ձեռս նեղչաց ձերոց ի միում աւուր եւ անախորժելի մահուամբ բառնայցեն զձեզ ի կենացս, զի զիտեմ ես զբարս աստուածութեան իշխանին Իսրայէլի, զի ոչ դադարէ մինչեւ կատարէ զկամս անձին իւրոյ»:

Հետապէս իշխանի իմաստուն խրատը, որ մինչիսկ մեզ համար քաղաքական գործունէութեան հիմ կարող էր համարուել մօտիկ անցեալում, մնաց ձայն բարբառոյ յանապատի: Ապստամբները արդէն պաշարել էին Կարինը: Գուհինը սարսափի մէջ էր: Յանկարծ մի տիտուր լուր ցնցեց երկիրը. արաբական բանակը, բաղկացած 30 հազար վարձկան թուրքերից ոմն Ամրի հրամանատարութեամբ եկել հասել էր Խլաթ քաղաքը: Աշոտն այս պահին նոյն քաղաքումն էր եւ տեսնելով ահաւոր վտանգը, պատուէր է գրկում իրբեւ թէ ամենուրեք միանալ եւ հաւաք ոյժերով դէմ դնել թշնամուն: Թուում է, թէ պատմագրի կողմից արգարացման տկար փորձ է: Աշոտը հաւանօրէն զնացել էր թշնամու բանակը հաշտութեան առաքելութեամբ:

Ապստամբները հաւատ չընծայեցին Աշոտի պատուէրին, կարծելով որ նա ուզում է նենգօրէն ազատել Կարինը պաշարումից եւ հաճօյանալ արաբներին:

Մի դունդ ապստամբներ անցան Արճէշ քաղաքը, բայց անյաջողութեան դիպեցան շնորհիւ քաղաքացիների մատնութեան: Արաբները յառաջացան Բազրեւանդ եւ բանակ զարկեցին Արճնի գիւղի մօտ:

Արճէշի գոյթը Կարին հասած, հայերը լըքեցին պաշարումը եւ խոյացան գէպի թշնամին: Պատմիչն անդամ զարմանում է, որ փոխանակ փախչելու յունական սահմանը եւ ազատելու իրենց կեանքը, ճակատեցին թշնամու դէմ, «լաւ համարեցան ընտրել զմահ անձանց, քան տեսանել զկորուստ աշխարհիս եւ զանպատուութիւն եկեղեցւոյ Քրիստոսի»:

Հազիւ հինգ հազար էին, իշխանագունք եւ շինական ժողովուրդ: Սկզբում քաջութեամբ յետ մղեցին թշնամու գրոհը, բայց յետոյ ընկ-